

Ա. Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Աշխատանքային կարգապահությունը և աշխատու-
մի սգտագործման խնդիրները, Երևան, ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, 1988,
157 էջ:

Արտադրողական ուժերի զարգացումը անընդմեջ է, սակայն տնտեսության զարգացման յուրաքանչյուր փուլ ունի արտադրության միջոցների և աշխատուժի զարգացման իր առանձնահատկությունները: Արդի ժամանակաշրջանին բնորոշ են տնտեսության զարգացման նոր գրանցումներ, որոնք իրենց ամբողջության մեջ առանձնահատուկ են, քանի որ որակապես նոր մակարդակ և հնարավորություններ են ենթադրում: Աշխատուժի վերարտադրությունը այս «ամակարգի բաղկացուցիչներից է, քանի որ հասարակական վերարտադրության անբաժանելի մասն է և այդ պրոցեսի արագացման հիմնական պայմանը, առավել ևս՝ նրա քանակական չափանիշը: Վերարտադրության էքստենսիվ իրականացումը այժմ սպառել է իրեն թե՛ անսահման և թե՛ զործնական նկատառումներով: Գրախոսվող աշխատությունը, ի թիվս սակավաթիվ ուսումնասիրությունների, հասաառում է այդ ենթադրությունը: Մերժելով այդ պրոբլեմի վարչաիրավական մեկնությունները, հեղինակը հետևողականորեն փնտրում է նրա տեսական չափանիշները, կատարում համապատասխան եզրահանգումներ և ընդհանրացումներ: «Այս պարզ ճշմարտությունը, — գրում է նա, — սակայն, իր մեջ ամփոփում է սոցիալ-տնտեսական հարաբերությունների մի բարդ համակարգ, որը պարզաբանման և մեկնաբանության կարգի ունի» (էջ 9):

Օգտագործելով ինչպես մարքսիզմի կլասիկների դրական ժառանգությունը, այնպես էլ տնտեսագիտական բնույթի դրականությունը, Ա. Պետրոսյանը հանգում է նոր կատեգորիայի՝ տնտեսական կարգապահության կիրառման անհրաժեշտության գաղափարին: «Տնտեսական կարգապահություն» հասկացությունը այստեղ բարձրացվում է տնտեսակարգ հասկացության մակարդակին, այսինքն՝ Լեոնովի իրավացիորեն մեկնաբանվում է օբյեկտիվ տեսանկյունից: Այդ նույն սկզբունքի կիրառման միջոցով նորովի է ներկայացվում նաև հասարակական կարգապահությունը: Այս առումով աշխատանքային կարգապահությունը ներկայացվում է որպես աշխատանքի պրոցեսում անհատի, կոլեկտիվի և հասարակության միջև ձևավորված սոցիալ-տնտեսական հարաբերությունների որոշակի կարգ: Այսօր սոցիալիստական տնտեսության որակական վերափոխման անհրաժեշտությունը պահանջում է վերարտադրության բարդ համակարգում հայտնաբերել նոր կապեր և փոխազդեցություններ, երևույթներ քննել և ուսումնասիրել ձոր չափանիշներով: Գիտական ուսումնասիրությունների բնագավառում հրապարակներ և ընդունելի են երևույթների կոմպլեքսային ուսումնասիրությունն է:

Գրախոսվող աշխատությունը այս տեսակետից ևս առանձնանում է: Այստեղ տնտեսական երևույթները ներկայացվում են որպես սոցիալ-տնտեսական և բարոյահոգեբանական իրավիճակների արդյունքներ: Ուստի աշխատանքում լայնորեն օգտագործվում են հեղինակի՝ 1985 թ. «անբավարարության մեքենաշինական մի շարք ձեռնարկություններում կատարած սոցիոլոգիական ուսումնասիրության արդյունքները: Այսպես՝ ուսումնասիրություններից պարզվում է, որ աշխատանքային կարգապահության խախտումները՝ մասնավորապես ամբողջօրյա պարապուրդները, ոչ միայն բուն արտադրության բնորոշ գործոնների ազդեցության, այլև ոչ արտադրական ուղիների զարգացման առանձնահատկությունների, ինչպես նաև առանձին կոլեկտիվներում ու միջավայրում ձևավորված բարոյահոգեբանական մթնոլորտի ազդեցության արդյունք են:

Գրախոսվող մենագրության մեջ առանձնահատուկ ուշադրություն է դարձվում աշխատանքային կարգապահության ամրապնդման խնդիրներին: Այստեղ շեշտը առավելապես դրվում է կարգապահության ամրապնդման տնտեսական մեթոդների վրա, ցույց է տրվում վարչակառավարական միջոցառումների աննպատակահարմարությունը և անարդյունավետությունը:

Նարժում ենք, աշխատությունը կշահեր, եթե ուսումնասիրության մեջ որոշակի տեղ հատկացվեր տնտեսական կարգապահությանը և դրանից բխող խնդիրներին: Աշխատության մեջ ուսումնասիրվում են այդ ճյուղում (մեքենաշինական) աշխատուժի բաշխման համամասնությունների փոփոխությունները՝ որակական և քանակական տեսանկյունից: Հեղինակը նկատի

րնույթ և տարատեսակ աշխատանքներ, ուստի դրվում է «ձեռքի աշխատանք» հասկացությունից մեկընդմիջա հրաժարվելու հարցը: Առաջարկվում է աշխատանքների ամբողջ համակարգը բաժանել պարզ և բարդ աշխատանքների: Հեղինակը այդ նույն սկզբունքով դասակարգում է արդյունաբերության բանվորների միջանցիկ մասնագիտությունների աշխատանքները և ուսումնասիրում է բանվորների քանակական ու մասնագիտական որակական կառուցվածքի փոփոխությունները:

Ձեռքի աշխատանքի կրճատման հանձնարարականների թվում հատկապես հիշարժան է դրա լուծման փուլային մոտեցման առաջարկը: Բացի այդ, հիմնահարցի կոմպլեքսային լուծման համար առաջարկվում է սկզբունքորեն վերանայել և կատարելագործել արտադրական բանվորների աշխատանքի դորժառական կառուցվածքը, արտադրության և աշխատանքի կազմակերպումը դնել սկզբունքորեն նոր հիմքերի վրա, ստեղծել ձեռքի աշխատանքի կրճատման նյութական շահադրդի ու պայմանները:

Ամբողջությամբ վերցրած դրախտավող մենագրությունը հաճելի անակնկալ է թե՛ մասնագետների, թե՛ ընթերցող լայն շրջանների համար՝ իր ինքնատիպությամբ և նորովի մեկնաբանություններով: Այդ պատճառով, կարծում ենք, որ այն կարող է օգտակար լինել թե՛ տրնտեսագիտությամբ զբաղվողների և թե՛ այլ մասնագետների համար:

Ա. Ե. ԱՐՋՈՒՄՄԱՆՅԱՆ, Վ. Տ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ, Գ. Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Տեղեկագրության բեկեթումներ